

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/5

30 հունիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Աննա Միրզոյանի 29.05.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 06.05.2015 թ-ի թիվ 6104145 ակտի դեմ:

Ա/Ձ Աննա Միրզոյանի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի 15.04.2015 թ-ին համաձայն Կապանի հարկային տեսչության պետի 07.04.2015 թ-ի թիվ 6104145 հանձնարարագրի անհատ ձեռնարկատեր Աննա Միրզոյանին պատկանող խանութում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Ստուգման արդյունքներով կազմվել է թիվ 6104145 ակտը, որի համաձայն անհատ ձեռնարկատեր Աննա Միրզոյանին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով նշանակվել է 150000 դրամի տուգանք:

Ա/Ձ Աննա Միրզոյանը գտնում է, որ ստուգումը կատարվել է օրենսդրության պահանջների խախտումներով, որի հետևանքով թիվ 6104145 ակտը ենթակա է անվավեր ճանաչման:

Թիվ 6104145 ակտում նշվել է, որ 15.04.2015 թ-ին ժամը 16:18-ին ինձ պատկանող խանութից կատարվել է 3800 դրամի գնում, որի համար աշխատակցի կողմից ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Նշված է նաև, որ նույն պահին նույն գնորդի կողմից գնվել է մեկ տուփ ծխախոտ, որի համար ՀԴՄ կտրոն տրամադրվել է:

Նախ հարկ է ճշտել, թե Կապանի հարկային տեսչության աշխատակցի կողմից այսպես կոչված գնումները ինչ միջոցների հաշվին են կատարվել՝ դրանք կատարվել են իր անձնական միջոցների հաշվին, թե սահմանված կարգով գնում կատարելու համար ստացված գումարների:

Հաշվի առնելով, որ գնված ապրանքները հետ չեն վերադարձվել անհատ ձեռնարկատեր Աննա Միրզոյանին և ստուգողները չեն պահանջել հետ վերադարձնել գնումների գումարը, ուստի կարելի է եզրակացնել, ոչ գնումները կատարվել են Կապանի տարածքային հարկային տեսչության աշխատակցի անձնական միջոցների հաշվին, որը կոպիտ խախտում է:

Ըստ գանգատի, սահմանված են հատուկ ընթացակարգեր, որոնցով նախատեսվել են բոլոր գործընթացները, սկսած գնումների համար նախատեսված գումարը ստացվելուց, գնումները կատարելուց մինչև գնված ապրանքների վերադարձնելը և գումարը հետ ստանալը: Ի վերջո որն է ապացույցը, որ գնվել է հենց ակտում նշված ապրանքները և վճարվել 3800 դրամ, այլ ոչ թե այլ գումար:

Ակնհայտ է, որ վարչական մարմնի և տնտեսվարող սուբյեկտի միջև ծագող հարաբերություններում վերջինիս համար ոչ բարենպաստ հանգամանքների դեպքում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը: Այդ առումով հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը կայացրել է բազմաթիվ որոշումներ, որոնցով խախտումները հիմնավորված չլինելու հիմքով, մասնավորապես, գնված ապրանքները ստուգողների կողմից հետ չվերադարձվելու,

վճարված գումարը հետ չստանալու հիմքերով տնտեսվարող սուբյեկտների դիմում-բողոքները բավարարվել են:

Ա/Ձ Աննա Միրզոյանը գտնում է, որ ստուգումը կատարվել է օրենսդրության պահանջների խախտումներով և խնդրում է անվավեր է ճանաչել խախտումներով կատարված ստուգման արդյունքում կազմված թիվ 6104145 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 07.04.2015 թ. թիվ 6104145 հանձնարարագրի համաձայն ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով Ա/Ձ Աննա Միրզոյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 06.05.2015 թ-ի թիվ 6104145 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընթացիկ հսկողության բաժնի պետ Արմեն Ստեփանյանի կողմից 15.04.2015 թ-ին ժամը 16:18-ին ք.Քաջարան, Աբովյան փողոցում գտնվող Ա/Ձ Աննա Միրզոյանին պատկանող խանութից կատարվել է գնում 3800 դրամի չափով՝ 2 հատ «Շանթ» «Մումուշ» տեսակի թխվածքաբլիթ՝ ընդհանուր 800 դրամ արժողությամբ, երկու տուփ «Ահմադ» տեսակի թեյ՝ 2000 դրամ արժողությամբ և երկու տուփ «Ռոյալ» տեսակի սուրճ՝ ընդհանուր 1000 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ Աննա Միրզոյանի գանձապահը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ա.Ստեփանյանի կողմից ժամը 16:20-ին կատարվել է նաև մեկ տուփ «Արարատ» տեսակի ծխախոտի գնում, որի դիմաց նույն գանձապահը ՀԴՄ կտրոն տրամադրել է: Ստուգումն իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 16:21-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն 14470 դրամ գումարով: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 3800 դրամը, ժամը 16:21-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 16:21-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման հավելված 2-ի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, ինչը հավելված 2-ի 40-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն դիտվում է որպես ՀԴՄ շահագործման կանոնների խախտում: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Սույն գործում առկա փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են 15.04.2015 թ-ին ժամը 16:18-ին ք.Քաջարան, Աբովյան փողոցում գտնվող Ա/Ձ Աննա

Միրզոյանին պատկանող խանութից գնված ապրանքների դիմաց վճարված 3800 դրամ գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 16:21-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 16:21-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման հավելված 2-ով սահմանված է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգը (այսուհետ՝ Կարգ):

Կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն. «Գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն»:

Իր հերթին, Կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց»:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են Ա/Ձ Աննա Միրզոյանի կողմից ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման հավելված 2-ի վերոգրյալ կետերի պահանջները խախտված լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 06.05.2015 թ-ի թիվ 6104145 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/ա՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ